ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

02/05/2019

ՈՐՈՇՈՒՄ N 28-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅԱՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001թ-ի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13 կետի գ/ ենթակետը և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

2019 թվականին բաց դասական աճուրդով օտարել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Գ. Նժդեհի փողոցի 18 շենք թիվ 19 հասցեում գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից 36.9քմ հողատարածքը /վկայական N23042019-09-0034/, հասարկական շինություն կառուցելու նպատակով, 1քմ մեկնարկային գինը սահմանելով 3000 ՀՀ դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի 6-րդ թաղամասի թիվ 30/8 հասցեում գտնվող / վկայական N18042019-09-0041/ բնակավայրերի այլ հողերից 616.5քմ հողատարածքը, հասարկական շինություն կառուցելու նպատակով, 1քմ մեկնարկային գինը սահմանելով 2000 ՀՀ դրամ:

3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Սալ- Քար թաղամասի թիվ 4/21 հասցեում գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից / վկայական N12042019-09-0045/ 57.4քմ հողատարածքը, հասարկական շինություն կառուցելու նպատակով, 1քմ մեկնարկային գինը սահմանելով 2000 ՀՀ դրամ:

4.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Քոլատակ թաղամասի թիվ 7 հասցեում գտնվող / վկայական N22032019-09-0055/ բնակավայրերի այլ հողերից 407.0քմ հողատարածքը, հասարկական ,շինություն կառուցելու նպատակով, 1քմ մեկնարկային գինը սահմանելով 1500 ՀՀ դրամ:

5.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Սարյան փողոց 2-րդ նրբանցքի թիվ 28 հասցեում գտնվող / վկայական N20032019-09-0007/ բնակավայրերի այլ հողերից 145.0քմ հողատարածքը, հասարկական շինություն կառուցելու նպատակով, 1քմ մեկնարկային գինը սահմանելով 1500 ՀՀ դրամ:

6. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Արցախյան խճուղի փողոցի թիվ 1/3 հողամասը / վկայական N15042019-09-0017/ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից 1426.0քմ հողատարածքը, բնակելի շինություն կառուցելու նպատակով, 1քմ մեկնարկային գինը սահմանելով 1500 ՀՀ դրամ:

7.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Ավանգարդ փողոցի թիվ 2/2 հասցեում գտնվող հողամասը / վկայական N18032019-09-0036/ բնակավայրերի այլ հողերից 48.4քմ հողատարածքը, բնակելի կառուցապատում իրականացնելու նպատակով, 1քմ մեկնարկային գինը սահմանելով 2000 ՀՀ դրամ:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԷՐԻԿ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄՀԵՐ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

ԴՈԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ

ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՌՈՒԻՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2019թ. Նոյեմբեր «3»
ք.Գորիս